ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Դրասխանակերտի տեղադրության հարցը շատ ուսումնասիրողների է հետաքրքրել: Այն տեղորոշվել է տարբեր վայրերում: Վերջին տեղը, որը նույնացվում է Դրասխանակերտի հետ, 1989թ. Ախուրյանի շրջանի Բենիամին գյուղի մերձակայքում պեղվող մեծ բնակավայրն է, որը թվագրվում է մ.թ.ա. VIII– մ.թ. IV դդ.[1]: Այն համարվում է Երվանդունիների և Արտաշես I-ի մեծ դաստակերտը, այսինքն՝ Vդ. Դրասխանակերտը, որը Տրդատ III. կողմից 325 թ. Կամսարականներին տրվելուց հետո դարձել է նրանց նստավայրը: Նման եզրակացության հանգելու համար հեղինակին հիմք է ծառայել Մովսես Խորենացու վկայությունը. «Յայնմ ժամու և ազգային նոցա Կամսար մկրտի իւրայովքն հանդերձ ի ձեռն մեծին Գրիգորի արքայի ընդունելով ի ջրոյն՝ տայ նմա ժառանգութիւն զմեծ դաստակերտն Արտաշիսի, որ այժմ ասի Դրասխանակերտ, և զգաւառն Շիրակ, որպէս ազգականի իւրում և մտերիմ հարազատի»[2]: Կամսարի մահից յոթ օր անց, Տրդատը նրա մեծ որդուն՝ Արշավիրին մխիթարելու համար հոր անունով նրանց նախարարների շարքին է դասում և նոր նվերներ տալիս «.... զքաղաքն Երուանգայ և զնորին գաւառն մինչև ցկատար ձորոյն մեծի»: Արշավիրը այդ դավառը իր անունով կոչում է Արշարունիք, որը մինչ այդ կոչվել էր Երասխաձոր: Այս հաղորդումից չի երևում, թե մեծ Դաստակերտ-Դրասխանակերտը Շիրակում է գտնվել, այլապես նա չէր առանձնացնի այդ երկուսն իրարից: Խորենացին հետագայում, Արշակի կողմից Արշակավանի վրեժը լուծելու կապակցությամբ, երբ ընաջնջվեց Կամսարականների ցեղը, նշում է միայն վերջիններիս նստավայր Երվանդաշատ քաղաքը և Արտագերս ամրոցը, որոնց վրա աչք էր գրել Արշակը[3], ինչպես նաև Նախճավան գյուղը, որտեղ ամբարված էին նրանց մթերքները[4]:

Ի՞նչ է նշանակում Դրասխանակերտ բառը: – Kert բաղադրիչով ավարտվող տեղանուններ Հայաստանում շատ կան[5]: Մեծ Դաստակերտ-

---

1 Ф. Тер-Мартиросян. Памятник классической античности Армении.— Вестник Ереванского университета, 1993, N3, с. 59-72; Ф. Тер-Мартиросов. Ширак в эпоху классической античности.— Научные труды. Вып II, Гюмри, 1999, с. 46.

2 *Մովսէս Խորենացի. Պատմութիւն Հայոց (Քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Հարութունեանի): Նմանահանութիւն: Լրացումները Ա. Սարգսեանի. Երևան, 1991, II, Ղ (90), ծան. Դրասհոնակերտ, Դրասհինակերտ:*

3 *Նույն տեղում, III, ԼԱ (31):*

4 *Նույն տեղում, III, ԼԲ (32):*

5 А. Г. Периханян. Материалы к этимологическому словарю древнеармянского языка. Ч. I. Ереван, *1993*, с. 32; *Ռուբեն Վարդանյան. Կերտ վերջավորությամբ տեղանունների ժամանակագրության շուրջը: Գիտական աշխատություններ, II, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գյումրի, 1999, էջ 127-131:*

Դրասխանակերտի հիմնադրումը Ա. Գ. Փերիխանյանը վերագրում է Երվանդունիներին: Արամեերեն արձանագրություններում Արտաշեսն իրեն անվանում է Երվանդական: Դրասխանակերտ-Դրասհինակերտ-Դրասհոնակերտը Ա. Գ. Փերիխանյանի ստուգաբանությամբ Drs-+hvan-, Drs – նշանակում է հայացք, hvan – արև, արևանման հայացքով օժտված: Դրասխան – Drshan հայերեն բառի կազմությունը, աչքի և արևի նույնացումը ցույց է տալիս հնգիրանցիների մոտ երեակայական մակգիրի բացակայությունը: Այդ մակգիրի արմատները շատ ավելի հին են և ներկայացնում են աչքի, որպես տեսնող օրգանի, կապը երկնային լուսատուի հետ[7]: Ինչպես Վահագնի ծննդի առասպելում. «և ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ. նա հուր հեր ունէր, ապա թե բոց ունէր մօրուս, և աչկունքն էին արեգակունք»[7]: Աչքը առասպելական խորհրդանիշ է, կապված մոգական ուժի հետ, որի շնորհիվ աստվածը կամ առասպելական անձը ընդունակ էր անտեսանելի մնալով տեսնել (հունական Աիդ): Շատ աստվածներ օժտված էին սարսափեցնող հայացքով, որին սովորական մահկանացուները չէին դիմանում[8]: Հայացքի մոգական ուժի, վատ աչքի, մահաբեր հայացքի մասին առասպելական պատկերացումները զարգացում են ստանում բանահյուսության մեջ: Ուշագրավ է Մովսես Խորենացու վկայությունը Երվանդի չար աչքի մասին. «Բայց ասեն զԵրուանդայ՝ ըստ հմայից դժնեայ գոլ ական հայեցուածով. վասն որոյ ընդ այգանալ աչալրջացն սովորութիւն ունել սպասաւորացն արքունի՝ վէմս որձաքարեայս ունել ընդդէմ երուանդայ և ի հայեցուածոցն դժնութենէ ասեն պայթել որձաքար վիմացն: Բայց այս կամ եղիցի սուտ և առասպել, և կամ դիւականս ինչ առ իւր ունել զօրութիւնս, զի այսպէս հայեցուածոցն անուամբ վնասեսցէ զորս կամի»[9]: Այսինքն շեշտվում են Երվանդի աստվածային ծագումն ու զորությունը:

Դրասխանակերտը հիշատակում է նաև Եղիշեն, կապված Վարդանանց, Հայոց պատերազմի հետ. «... գուժկան հասանէր յաշխարհէն Հայոց, զճակատ հարեալ և զօձիս պատառեալ վասն ասլստամբին Վասակայ. «Յետս կացեալ յուխտէն քրիստոնէութեան և աւերեալ զբազում տեղիս Հայոց աշխարհին, մանաւանդ զամերոցս արքունի, որ կայանք զօրացն էին, զԳառնին և զԵրամաւնս և զԴրասխանակերտն՝ զմեծ դաստակերտն, զամուրն Օշական, զՓառախոտն, զԱարդեանսն, զՁորակերտն աւան և զբերդն Արմաւրի, զԿուաշն աւան, զԱրուճն, զԱշնակ և զամենայն ոտն Արագածու, և զնահանգն Արտաշատու և զԱրտաշատն ինքնին գլխովին, և զամենայն գեւզս և զաւանս, որ շուրջ զնովաւ էին, առեալ աւերեալ և հրձիգ արարեալ, և զամենեցուն ձեր զընտանիս փախուցեալ մերժեալ յիւրաքանչիւր բնակութենէ»[10]: Երվանդ Տեր-Մինասյանը Եղիշեի աշխարհաբար թարգմանության մեջ գրում է, որ հիշյալ ձմեռոցներն ու զորակայանները մեծ մասամբ հայտնի անուններ են, ինչպես Գառնին, Երամոնսը, Օ-

6 А. Г. Перихан я н. Նշվ. աշխ., էջ 32–34:
7 Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, I, ԼԱ (31):
8 Мифы народов мира. Энциклопедия, т. I, М., 1987, с. 306-307.
9 Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, II, ԽԲ (42):
10 Եղիշեի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին (Հրատ. պատրաստելը և նախաբանը Ե. Տեր-Մինասյանի). Երևան, 1957, III, էջ 78-79:

չականը, Արմավիրը, Կուաշ-Կոշ ավանը, Արուճը և Աշնակը, Արագածոտն գավառը, Արտաշատը, իսկ Դրասխանակերտը, Վարդանաշատը, Փառախոտը, Ցոլակերտը, Աարդեանքը հայտնի չեն[11]: Արդեանքը (Սարդեանք) հիշատակվում է նաև Փավստոս Բուզանդի մոտ, Պապի օրոք Դղակ մարդպետի դավաճանության և սպանության առիթով[12]: Հ. Տեր-Պողոսյանը ենթադրում է, որ Արդեանք արքունի գյուղը պետք է լինի Իդդիրը, որի մոտ, Արարատի ստորոտին, ժայռի վրա մի մեծ ամրոց կա[13]: Այսինքն, Արդեանքը, Փառախոտը և Ցոլակերտը գտնվում են Արաքսի աջ ափին, Արմավիրի դիմաց: Այրարատը, ինչպես Երվանդունիների, Արտաշեսյանների և Արշակունիների ժամանակ, այնպես էլ մարզպանական Հայաստանի քաղաքական ու վարչական կենտրոնն էր՝ «տուն Արքունի» կամ «ոստան Հայոց»-ը: Այրարատը եղել է թագավորական, նաև մարզպանական զորամասերի ձմեռանոցը, վերոհիշյալ, ստրատեգիական տեսակետից կարևոր ամրոցները «կայանք զօրաց» հիմնականում տեղորոշվում են այստեղ[14]: Հ. Տեր-Պողոսյանը Վարգանաշատը տեղադրում է Անբերդում, գտնելով, որ հետագայում Վարդանաշատ անունը փոխարինվել է Անբերդով: Նա Դրասխանակերտը տեղադրում է Օշականի և Երամոնսի միջև, Աշտարակի տեղում: Վերջինս համարում է, որ Աշտարակը Դրասխանակերտի այսօրվա անունն է[15]: Հ. Հովհաննիսյանը, համաձայն չլինելով վերոհիշյալ կարծիքի հետ, չի կոնկրետացնում Դրասխանակերտի տեղը[16]: Ըստ Ա. Մաթևոսյանի, Եղիշեի հիշատակած Գառնին և Արամոնքը (Արամուս), Դրասխանակերտը, Վարգանաշատը և Օշականը, Փառախոտը, Արդեանքը (Իդդիր), Ցողակերտը և Արմավիրը, Կոշը[17], Արուճը և Աշնակը եղել են չորս մեծ ստրատեգիական միավորները, որը հուշում է Եղիշեի շարադրանքը. 1) Դառնի–Արամուս, 2) Դրասխանակերտ–Վարդանաշատ–Օշական, 3) Փառախոտ–Արդեանք–Ցողակերտ–Արմավիր, 4) Կոշ–Արուճ–Աշնակ: Դրասխանակերտը, ըստ նրա, Աշտարակն է, բանասիրական տեսանկյունով: Վերջինիս և Օշականի միջև միայն Ոսկեվազ-Վարդանաշատը կարող է լինել[18]: Մյուս ուսումնասիրողները չկոնկրետացնելով գտնվելու վայրը նշում են, թե Դրասխանակերտը Այրարատում է[19]: Ա.Երեմյանը «Հայաստանը և հարևան երկրները 591-

---

11 Եղիշեի Վարդանանց Պատմությունը (թարգմ. և ծանոթ. Ե. Տեր-Մինասյանի). Երևան, 1958, ծան. 99:

12 Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց (բնագիրը Գ. Պատկանյանի, թարգմանությունը և ծանոթ. Ստ. Մալխասյանցի). Երևան, 1987, V, 2 (6):

13 Հ. Պ. Տ ե ր - Պ ո ղ ո ս ե ա ն. Տեղագրական հետազոտութիւններ Հայաստանի քանի մը քաղաքներու և բերդերու մասին. Վիեննա, 1951, էջ 50-59: Հ. Մ. Յ ո վ հ ա ն - ն է ս ե ա ն. Հայաստանի բերդերը. Վենետիկ, Ս.Ղազար, 1970, էջ 829: Հ ո վ հ. Հ ա - կ ո բ յ ա ն. Ուղեգրություններ. հ. Ա, ԺԳ-ԺԶ դար (1253-1582), Երևան, 1932, էջ 110:

14 Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ). հ. II, Երևան, 1984, էջ 116:

15 Հ. Պ. Տ ե ր - Պ ո ղ ո ս ե ա ն. Նշվ. աշխ., էջ 50-59: Հ. Մ. Յ ո վ հ ա ն - ն է ս ե ա ն. Նշվ. աշխ., էջ 813, 818:

16 Հ. Մ. Յ ո վ հ ա ն ն է ս ե ա ն. Նշվ. աշխ., էջ 819:

17 Սասանյան գերությունից վերադառնալուց հետո, կուրացած Տիրան թագավորը թողնում է գահը և գնում է բնակվելու Կուաշ (Կոշ) ավանում:

18 Ա ր տ ա շ ե ս Մ ա թ և ո ս յ ա ն. Դարերի խորքից.– «Գիտություն և տեխնիկա», 1986, N3, էջ 30, 32:

19 Ս ո ւ ք ի ա ս Է փ ր ի կ յ ա ն. Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան. հ. 1, Վենետիկ, Ս. Ղազար, 1902, էջ 394: Թ. Խ. Հ ա կ ո բ յ ա ն, Ստ. Տ. Մ ե լ ի ք - Բ ա խ շ յ ա ն, Հ. Խ. Բ ա ր ս ե ղ յ ա ն. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. հ. 2, Երևան, 1988, էջ 150: Հայկական սովետական հանրագիտարան, հ. 6, Երևան, 1980, էջ 558: Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. Հայոց պատ-

653թթ» քարտեզում Դրասխանակերտը տեղադրում է Արաքսի վրա և Արտաշատ մայրաքաղաքից հարավ, «Հայաստանը և հարևան երկրները 855–953 թթ» քարտեզում՝ Արտաշատի և Դվինի միջև, իսկ «Հայաստանը X դ. վերջին և XI դ. սկզբին» քարտեզում՝ Արտաշատից հյուսիս, Արաքսի վրա[20]: Հովհաննես Դրասխանակերտցին (840–850 թթ. – 929թ.), անվանի պատմագիրն ու կաթողիկոսը (898–929թթ.), սովորել է Սևանա կղզու դպրոցում IX դ. հայ միջնադարյան մշակույթի և հոգևոր նշանավոր դեմքերից մեկի՝ Մաշտոց Եղվարդեցու մոտ: Վերջինս Արագածոտն գավառի Եղվարդ գյուղի Գրիգոր քահանայի որդին էր[21]: Մաշտոցը 860 թ. Սևանա կղզում դպրոց է բացում, 897–898թ. (7 ամիս) դառնում է կաթողիկոս, և մահից հետո թաղվում է Գառնի ամրոցում: Հովհաննես Դրասխանակերտցին իր Հայոց պատմության մեջ նշում է, որ ինքը Մաշտոց Եղվարդեցու ազգականն է. «Զի թէպէտ և յաշակերտութենէ առն սրբոյն Մաշտոցի ի մանկութենէ իմմէ՝ այլ և ազգակից հարազատութեան նորա ըստ մարմնոյ»[22]: Հովհաննես Դրասխանակերտցին Եղվարդն անվանում է մեծ դաստակերտ, իսկ Արուճը՝ դաստակերտ, Գրիգոր Մամիկոնյանի կողմից այդ վայրերում եկեղեցի կառուցելու կապակցությամբ[23]: Նա նշում է նաև, որ ինքը «մի ամրոցիկ» ունի Բյուրականում, և գյուղում կառուցել է եկեղեցի (ս. Հովհաննես, X դ.): «Եւ դարձեալ չու յուղի անկեալ չոգաք մինչև ի ձեռակերտ ամրոցիկն իմ Բիւրական, զոր ստացեալն էր իմ գանձի գնոյ, ուր և շինեալ յարդարեալ իսկ էի եկեղեցի հաստահեղոյս կոփածոյ քարամբք պերճապաճոյճ պճնողութեամբ և նկարակերտ յօրինուածով՝ և վանս կուսակրօն միանձնացելոց զնա հաստատեալ»[24]: Այսինքն, Դրասխանակերտը, Եղիշեի նշած հերթականության և վերը բերված տվյալների համաձայն, պետք է փնտրել Այրարատ աշխարհի Արագածոտն գավառում, Երամոնս-Արամոնքի (Արամուս) և Վարդանաշատի ու Օշականի միջև ընկած տարածքում, Եղվարդի շրջակայքում: Տեղին է հիշել, որ «արքունի ձմերոցը» չէր կարող լինել ցուրտ տեղերում, բարձունքների վրա: Դրանք պետք է լինեին բարեխառն, մեղմ կլիմա ունեցող վայրերում: Եղիշեի հիշատակած «արքունի ձմերոցները» բոլորն էլ գտնվում են դաշտավայրում կամ նախալեռնային շրջաններում: Այսինքն, մեծ դաստակերտ-Դրասխանակերտը չէր կարող լինել Շիրակում, առավել ևս Բենիամինում: Դրասխանակերտում պետք է լիներ միջնադարյան բնակավայր, շերտ, որը Բենիամինում բացակայում է:

Մեծ դաստակերտ-Դրասխանակերտը, ինչպես վերը նշեցինք, որոշ գիտնականներ տեղադրում են Աշտարակում: Գր. Ղափանցյանը Աշտարակ («բուրգ») անունը կապում է փյունիկյան սիրո աստվածուհի Իշտարի

մություն (աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ. Թոսունյանի). Երևան 1996, էջ 368: Հ. Հ յ ո ւ բ շ մ ա ն. Հին հայոց տեղւոյ անունները (թարգմ. Հ. Բ. Պիլեզիճիկյանի). Վիեննա, 1907, էջ 338:

20 ՀԺՊ, հ. II, քարտեզներ: ՀԺՊ, հ. III, Երևան, 1976, քարտեզ: ՀՍՍՌ Ակադ. Երևան–Մոսկվա, 1961, էջ 105:

21 «Սա է ի տոհմէ քահանայական, ի գեղջէն Եղվարդայ, ի ժառանգայ մենաստանաց, որ անուամբ սրբոյն Թէոդորոսի էր»: Հայերեն ձեռագրերի հիշատակարան, Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Ս. Մաթևոսյանի. Երևան , 1988, էջ 40-43(Մաշտոց):

22 Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 186-187:

23 Նույն տեղում, էջ 94-95, 198-199:

24 Նույն տեղում, էջ 336:

անվան հետ[25]: Աշտարակում հայտնաբերվել են բրոնզի և երկաթի դարաշրջանների նյութեր, այն հարուստ է նաև միջնադարյան հուշարձաններով: Բերդաթաղում «եղել է ամրոց, որի մնացորդները դարասկզբին տեսել է Թորամանյանը»[26]: Ըստ Ն. Մառի, նախաքրիստոնեական շրջանում, Աշտարակում եղել է վիշապ-օձերի պաշտամունքի վայր, որի վրա հետագայում կառուցվել է եկեղեցի[27]: Հ.Մանանդյանը ենթադրում է, որ Աշտարակը Պևտինդերյան քարտեզի Արտաշատ–Սեբաստոպոլիս ճանապարհի վրա գտնվող հաջորդ Strangira[28] (Ra Stranguria) կայանն է: Աշտարակ անունը հիշատակվում է «Կարմրավոր» եկեղեցու (VII դ.) շինարարական արձանագրության մեջ[29], իսկ ձեռագիր աղբյուրներում այն հիշատակվում է IX դարից[30]:

Այսինքն, Աշտարակը կարող էր համարվել մեծ դաստակերտ-Դրասխանակերտը, եթե դրան չխանգարեր վերոհիշյալ Աշտարակ անվան հիշատակությունը: Այլապես, Հովհաննես Դրասխանակերտցին կկոչվեր Աշտարակեցի: Աշտարակը, այդ վայրի ուշ շրջանում տրված անունը լինելու վերոհիշյալ վարկածը նույնպես մեզ համոզիչ չի թվում:

Կարելի է ենթադրել, որ մեծ դաստակերտ-Դրասխանակերտը Դովրին է: Վերջինս գտնվում է Եղվարդից 4–5 կմ դեպի հյուսիս, Արա լեռան արևելյան կողմում, հարթության մեջ վեր բարձրացող բլրի վրա[31]: Պեղումներով հայտնաբերված նյութերը վկայում են, որ Դովրին, այդ թվում նաև ամրոցը, բնակեցված են եղել դեռևս վաղ բրոնզի ու վաղ երկաթի դարաշրջաններում: Ուրարտական շրջանում այստեղ կառուցվել է բազալտ քարով շարված հզոր ամրոց, որը վերակառուցվել է և փոփոխությունների ենթարկվել անտիկ շրջանում: Դովրին բնակեցված է եղել նաև միջին դարերում: Այն հարուստ է միջնադարյան պաշտամունքային և բնակելի շինություններով[32]: Այսինքն, Դովրին իր դիրքով ու ամրոցով կարող էր լինել դաստակերտ-Դրասխանակերտը, զորակայանը: Դրասխանակերտը

---

25 Г. А. К а п а н ц я н. Историко-лингвистическое значение топонимики древней Армении.— Историко-лингвистические работы (ИЛР). Т. II, Ереван, 1975, с. 141.

26 Թ. Թ ո ր ա մ ա ն յ ա ն. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության. հ. 2, Երևան, 1948, էջ 116:

27 Н. Я. М а р р. Легенды об основании Куара в Армении и Киева на Руси.— Известия государственной Академии истории материальной культуры. Т. III, Л., 1924, с. 278.

28 Я. А. М а н а н д я н. О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен. Ереван, 1954, с 154.

29 Г. А. К а п а н ц я н. Аштаракский говор.—ИЛР. Т. II, с.430, ссылка 1.

30 Ղ. Ա լ ի շ ա ն. Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց. Վենետիկ, 1890, էջ 185:

31 Գ. Ա ռ ե ղ յ ա ն, Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Հ. Ս ր ս ո ն յ ա ն, Ռ. Ծ ր ա գ յ ա ն, Ա. Ք ա լ ա ն թ ա ր յ ա ն. Հնագիտական հետազոտություններ Հայկական ՍՍՀ Աշտարակի և Նաիրիի շրջաններում,– «Լրաբեր հաս. գիտ.», 1977, №4, էջ 89: Գ. Տ ի ր ա ց յ ա ն, Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն, Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Գ. Ս ա ր գ ս յ ա ն, Ռ. Վ ա ր դ ա ն յ ա ն. Դովրի ամրոցի պեղումները (1979-1980թթ.), ՀՍՍՀ-ում 1979-1980թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզեր. Երևան, 1981, էջ 12: Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. Դովրիի 1989-1990թթ. ուսումնասիրության արդյունքների ու նշանագրված անոթների մասին, ՀՀ 1989-1990թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքների թեզիսներ. Երևան, 1991, էջ 58-60:

32 Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 58–60:

Դովրիում տեղադրելը չի հակասում նաև Եղիշեի թվարկած զորակայանների հերթականությանը և մոտ է Եղվարդին: Դրասխանակերտի տեղադրության հարցի պարզաբանմանը կարող է նպաստել Դովրիի, և մինչև Օշական ընկած տարածքի հուշարձանների ուսումնասիրությունը: Այրարատում անտիկ և միջնադարյան ամրոցներ ու բնակավայրեր շատ կան: Եղիշեն նշել է միայն համապետական նշանակություն ունեցող ամրոցները: Նրա թվարկած բոլոր ամրոց-զորակայանները, որպես հարմար ստրատեգիական վայրեր, ամրացված են եղել ուրարտական և ավելի վաղ շրջաններում: Այսինքն, դրանք այդ գարաշրջաններում նույնպես եղել են Արարատյան դաշտը շրջապատող ստրատեգիական ամրոց-բնակատեղիներն ու զորակայանները: Ինչ վերաբերում է մեծ դաստակերտ-Դրասխանակերտը Կամսարականների նստավայր լինելուն, հայտնի է, որ IV դ. Կամսարական նախարարական տոհմի կենտրոնը, Երվանդունիների նստավայր Երվանդաշատն էր, իր քաղաքային տերիտորիայով և Արշարունիք գավառով:

Ֆ. Տեր-Մարտիրոսովին, ըստ երևույթին, Դրասխանակերտը Բենիամինի հետ նույնացնելուն նպաստել է նաև Շիրակավանում (տուֆից) և Բենիամինում (կրաքարից) հայտնաբերված երկուական, վերևում եռատամ, գեպի ներքև նեղացող կոթողները, որոնք պոչի մասով հագցվել են քառանկյուն պատվանդանի մեջ[33]*: Հայտնի է, որ Հայաստանի Հանրապետության տարբեր շրջաններից հայտնաբերվել են 12 այդպիսի կոթողներ, որոնք իրենց վրա կրում են Արտաշես I-ի արամեերեն արձանագրությունները: Դրանք վերաբերում են գյուղում և գյուղերի միջև հողաբաժանություն կատարելուն*[34]*: Այսինքն, Արտաշես I-ը հողային ռեֆորմ, աշխարհագիր է անցկացրել և սահմանաքարեր կանգնեցրել, որի մասին վկայում է Մովսես Խորենացին. «... Արտաշիսի, հրամայէ զսահմանս գիւղից և ագարակաց որոշել քանզի բազմամարդացոյց զաշխարհս Հայոց, եկամուտս բազումս ածելով ազգս, և բնակեցուցանելով ի լերինս և ի հովիտս և ի դաշտս: Եւ նշանս սահմանացն հաստատեաց այսպէս. հրաման տալով քարինս կոփել չորեքկուսիս, և պնակաձև փոսել զմէջսն, ծածկելով յերկրի. և չորեքկուսիս ի վերայ յարուցանել ամբարտակս, սակաւ ինչ բարձրագոյն յերկրէ»*[35]*:*

Ֆ. Տեր-Մարտիրոսովը գանում է, որ Շիրակավանի և Բենիամինի անարձանագիր սահմանաքարերը պատկանում են Արտաշես I-ին: Դրանք տվյալ դեպքում, ըստ նրա ցույց են տալիս, որ այդ բնակավայրերը Արտաշեսինն են և Շիրակավանը արտաշեսյան սահմանաքարերի պաարաստման

---

33 Ֆ. Տեր-Մարտիրոսյան. Անտիկ Շիրակավան.— «Գիտություն և տեխնիկա», 1984, № 7, էջ 51, Նույնի՝ Памятник..., с. 66—67; Նույնի՝ Ширак в эпоху..., с. 39; Ф. Тер-Мартиросов, Г. Караханян. Раскопки поселения и некрополя античного Ширакавана.— "Научные труды", вып. 1, Гюмри, 1998, с. 18.

34 Г. А. Тирацян. Еще одна арамейская надпись Арташеса I, царя Армении.— Вестник древней истории, М., 1980, N4, с. 99-104; Գ. Տիրացյան. Արտաշես I-ի ևս մեկ նորագյուտ արամեական արձանագրություն.— «Պատմա-բանասիրական հանդես», 1977, N 4, էջ 254-259, Г. Х. Саркисян. О провинциях и провинциальных канцеляриях древней Армении.— Древний Восток и мировая культура, М., 1981, с. 98-102; А. Г. Перихан ян. Նշվ. աշխ., էջ 6–7:

35 Մովսես Խորենացի, II, ԾԶ (56):

Շիրակի կենտրոնն է: Եթե ընդունենք, որ հեղինակը ճիշտ է, այդ դեպքում, ինչպե՞ս բացատրել երկուական սահմանաքարերի առկայությունը: Մի՞թե մի կոթողը բավարար չէր իմանալու համար, որ Շիրակավանը կամ Բենիամինը թագավորինն են:

Ընդհանրապես, աշխարհագիր անցկացվում էր, երբ իշխանության էին գալիս նոր դինաստիաներ, օտար տիրապետություն կամ երբ տեղի էր ունենում տնտեսական աճ, որը նպաստում էր ազգաբնակչության աճին, կամ տեղի էին ունենում այլ փոփոխություններ և այլն[36]: Աշխարհագիր անցկացնելիս հաշվառվում էին մշակվող հողերի և գյուղատնտեսական մշակույթի տեսակները: Դրանց գրանցումը տեղի էր ունենում ըստ վարչական բաժանման միավորների՝ գավառների[37]: Ըստ Պլինիոս Ավագի, Մեծ Հայքը բաժանված է եղել 120 ստրատեգիաների[38]: Այս տերիտորիալ բաժանումը վերաբերում է Արտաշեսյանների, ավելի ճիշտ Արտաշես I-ի ժամանակաշրջանին: Ընդունված է, որ պատմականորեն ժառանգված 120 ստրատեգիաները և միջնադարյան աղբյուրներում հիշատակվող գավառները կապված են իրար հետ: «Աշխարհացույց»-ում (VII դ.) գավառների թիվը 198 է (198:120): Արտաշեսյան սահմանաքարերի արամեերեն արձանագրությունների ուսումնասիրությունից պարզվել է, որ դրանք պատկանում են չորս խմբի: Ըստ հայտնաբերման վայրի, սահմանաքարերը ընդգրկում են «Աշխարհացույց»-ում նշված հինգ–վեց գավառ և ենթադրվում է, որ այդ չորս խումբը ներկայացնում է Արտաշես I-ի շրջանի չորս վարչատարածքային միավոր: Այսինքն, մ.թ.ա. II դ. բացի թագավորական կենտրոնական գրասենյակից, եղել են նաև գավառական գրասենյակներ[39]:

261–293 թթ. Հայաստանի պարսկական մասում 32 տարի անընդմեջ «Հայաստանի մեծ թագավոր» տիտղոսով կառավարում են Որմիզդ-Արտաշիրը (261–272 թթ.), նրա որդի Որմիզդակը (273–276 թթ.) և Ներսեհը (276–293 թթ.): Որմիզդ-Արտաշիրը մի շարք միջոցառումներ է անցկացնում, աշխարհագիր է կատարում, վերանայում է երկրի կալվածքների սահմանները, կարգավորում հարկային համակարգը: Ուստի փոփոխվում են Արտաշեսի ժամանակաշրջանի սահմանաքարերը և կանգնեցվում են նորերը, որոնք կոչվում են «Արտաշիրական»[40]: Տրդատ III-ը, երբ վերականգնեց Արշակունիների իշխանությունը, միավորեց Հայաստանը և 298թ. հետո նոր աշխարհագիր անցկացրեց, նախարարական իշխանությունների նոր վերաբաժանում կատարեց: Նախարարների տեղաշարժը նոր կալվածքներ, նույնպես կապված էր աշխարհագրի հետ: «Արտաշիրական» սահմանաքարերը փոխարինվեցին նորերով[41]: Տրդատի կողմից Կամսարականներին տարածքներ նվիրելու Խորենացու վկայությունից բացի, մենք ունենք մի փաստ ևս՝ Տրդատ III-ի Ապարանի հունարեն արձանագրության համաձայն, նա Գնթունիների տոհմի իշխաններից մեկին կալվածքներ

36 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույցի»-ի. Երևան, 1963, էջ 21-23:

37 Նույն տեղում, էջ 21-23:

38 Plinius. Nat. hist., VI, 9-10; Ս. Տ. Երեմյան. նշվ.աշխ., էջ 21: Г. Х. Саркисян. նշվ. աշխ., էջ 100–102:

39 Г. Х. Саркисян, նշվ. աշխ., էջ 102:

40 ՀԺՊ, II, էջ 49-52: Մովսես Խորենացի, II, ՀԷ (77):

41 ՀԺՊ, II, էջ 52, 70-71:

է նվիրում Նիգ գավառում[42]: Սակայն նախարարների տերիտորիաները որքան էլ փոփոխության ենթարկվեին, գավառը մնում էր որպես առանձին միավոր:

«Աշխարհացույցում» թվարկվող գավառները, ինչպես վերը նշեցինք, 198 են, որոնք մտնում են 15 նահանգների մեջ: Այստեղ մանրամասնորեն ներկայացված է Արշակունիների ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական ու վարչական բաժանումը, որը վկայում է, որ հեղինակի ձեռքին, հավանարար, եղել են IVդ. առաջին քառորդի աշխարհագրի տվյալները[43]: Դրանք սովորաբար պահվում էին արքունի դիվանում, նախ Արտաշատում, այնուհետև Դվինում, հազարապետի իրավասության տակ[44]:

Ինչպես տեսնում ենք, Արտաշեսի հողային ռեֆորմից հետո կատարվել են մի շարք աշխարհագրեր և կանգնեցվել են նոր սահմանաքարեր: III դ. երկրորդ կեսին և IV դ. առաջին կեսին ավատական կարգերը բավականին առաջադիմել էին և նոր աշխարհագիր անցկացնելիս, նոր պայմաններին համապատասխան, մասնատվել են տարածքային միավորները, և դրանց հիմքի վրա ձևավորվել են նախարարական (ֆեոդալական) տիրույթները[45]: Անհայտ է, սակայն, նոր կանգնեցված սահմանաքարերն արձանագիր են եղել, թե՞ ոչ: Համենայն դեպս դրանց ձևը պետք է նման լիներ Արտաշեսյան կոթողներին, որովհետև արքայի անունից էին կանգնեցվում: Կարծում ենք, Շիրակավանի սահմանաքարերը Արտաշես I-ին վերագրելն անհավանական է: Հավանարար, դրանք Տրդատ III-ի աշխարհագրի ժամանակ դրված սահմանաքարերն են, երբ տարածքը Կամսարականներին նվիրվեց:

К ВОПРОСУ ТОПОГРАФИИ ДРАСХАНАКЕРТА

ЖОРЕС ХАЧАТРЯН

Резюме

Вопрос топографии Драсханакерта интересовал многих исследователей. Ученые локализуют Драсханакерт в разных местах древней Армении. В последние годы высказывалось мнение, по которому Драсханакерт идентифицируется с поселением, раскапываемым в районе Ахуряна недалеко от селения Бениамин (VIII в. до н. э. — IV в. н. э.). Драсханакерт был большим дастакертом при Ервандидах и Арташесе I, затем Трдат III передал Драсханакерт Камсараканам, которые сделали его своей резиденцией. На основании первоисточников показано, что поселение Бениамин не могло быть Драсханакертом — "Царской зим-

---

42 Հակոբ Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հ. Բ, մասն Ա, Երևան, 1978, էջ 126: М. Ростовцев. Апаранская греческая надпись царя Трдата. СПб., 1911, с. 28; *Ս. Տ. Երեմյան. նշվ. աշխ., էջ 22:*

43 Ս. Տ. Երեմյան. նշվ. աշխ., էջ 22-23:

44 Նույն տեղում, էջ 20-21, К. П. Паткано в. Армянская география VII века. СПб., 1877, с. 42, прим 150.

45 Ս. Տ. Երեմյան. նշվ. աշխ., էջ 23:

ней резиденцией" и стоянкой войск, а также резиденцией Камсараканов. Такое поселение-резиденция должно было находится на территории с умеренными климатическими условиями, а главное, при раскопках должен был раскрыться средневековый слой этого поселения. Учитывая эти обстоятельства, а также перечисленную очередность царских стоянок у древнего историка Егише, мы предполагаем, что Драсханакерт мог быть расположен на территории недалеко от Егварда в Доври, крепости-поселении. Однако, для полного изучения и освещения этого вопроса необходимо исследовать памятники, находящиеся в районе от Доври до Ошакана. Утверждается, что арташесовские межевые камни, найденные в Ширакаване и Бениамине, были поставлены там впоследствии в период правления Трдата III.

TO THE QUESTION OF TOPOGRAPHY OF DRASKHANAKERT

ZHORES KHACHATRYAN

S u m m a r y

On the ground of known sources a trial is made to show that Benjamin couldn't be Draskhanakert– the "Royal wintering", the army station and the residence of the Kamsarakans. It could be Dowri or another site in the territory between Aramus and Oshakan. Both of the borderstones (stellae) of Shirakavan and Benjamin, ascribed to Artashes, have been put afterwards in the times of Tiridates III.